Tempus

# ARMENQA

## ՀՀ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ

ARMENQA

# Ի՞ՆՉ Է ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ:

Այն՝ *ՀՀ կրթական հաստատությունների կողմից բոլոր մակարդակներում տրամադրվող որակավորումների միասնական համակարգ:*

- համապարփակ գործիք է, որը նկարագրում է, թե շրջանավարտը ինչ գիտելիքներ, կարողություններ և հմտություններ է ձեռք բերել որակավորման տվյալ մակարդակում
- նպաստում է Հայաստանում շնորհված որակավորումների թափանցիկությանը, համադրելիությանը և ճանաչմանը
- նպաստում է շրջանավարտների զբաղվածության բարձրացմանը, շրջանավարտների միջազգային շարժունությանը
- խթանում է Հայաստանում շնորհված որակավորումների ճանաչումը արտասահմանում

ARMENQA

# Ի՞ՆՉ Է ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿԸ:




ARMENQA

# ՈՎՔԵ՞Ր ԵՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

**Բուհեր**

- Կրթական վերջնարդյունքներով արտահայտված ուսումնական ծրագրերի մշակման և գնահատման կողմնորոշիչներ,
- արտասահմանում ստացված որակավորումների ճանաչման գործիք,
- շնորհած որակավորումների վերաբերյալ բուհերի հաշվետվողականություն:

**Գործատուներ**

- Աջակցություն գործատուներին՝ տարբեր մակարդակների և ոլորտների որակավորումները մեկնաբանելու և հասկանալու համար,
- տեղեկատվության տրամադրում որակավորման յուրաքանչյուր մակարդակում ձեռք բերված գիտելիքների, կարողությունների և հմտությունների վերաբերյալ:

**Հանրություն՝ ներառյալ ուսանողներ և շրջանավարտներ**

- Նպաստում շարժունությանը՝ ազգային և միջազգային մակարդակներում,
- օժանդակություն զբաղվածության ընդլայնմանը,
- անհատական զարգացման խրախուսում՝ ինֆորմալ կրթության հավաստման միջոցով:

# ՀՀ բարձրագույն կրթության որակավորումներ



# ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ՝

- Գիտելիք
- Հմտություն
- Կարողություն

Որը՝

- Համադրելի է Դուբլինյան նկարագրիչներին ( *Գիտելիք և իմացություն, գիտելիքի և իմացության կիրառումը, .հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ, ընդհանրական իմացական կարողություններ, ինքնավարություն և պատասխանատվություն* )

- Որակավորումների եվրոպական շրջանակին

ARMENQA

## ՀՀ բարձրագույն կրթության որակավորումների ազգային շրջանակի 6-րդ և 7-րդ մակարդակների նկարագրիչները

| Որակավորման նկարագրիչները | | ԲԱԿԱԼԱՎՐ | ՄԱԳԻՍՏՐՈՍ |
|---|---|---|---|
| ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **5. Ինքնավարություն և պատասխանատվություն** (ներառյալ սովորելու կարողությունները) | • Ունակ է նվազ ղեկավարության ներքո ծավալելու գործունեություն և կատարելու առաջադրանքներ մասնագիտական կամ կրթական ոլորտում, կայացնելու որոշումներ սահմանափակ ինքնուրույնության պայմաններում և պատասխանատվություն ստանձնելու թիմում:<br>• Ունակ է ինքնուրույն շարունակելու հետագա ուսումնառությունը ֆորմալ, ինֆորմալ և ոչ ֆորմալ միջավայրերում: | • Ունակ է լուծելու բարդ խնդիրներ և կատարելու առաջադրանքներ նեղ մասնագիտական կամ կրթական ոլորտում, ինքնավարությամբ և մասնագիտական ինքնուրույնությամբ կառավարելու նոր մոտեցումներ պահանջող աշխատանքային իրադրություններ, նպաստելու գիտելիքի, մասնագիտական գործունեության և հետազոտության առաջընթացին, պատասխանատվություն ստանձնելու թիմում այդ աշխատանքի համար և ղեկավարելու այն:<br>• Ունակ է բացահայտելու իր սեփական կրթական կարիքները և ինքնուրույն շարունակելու ուսումնառությունը: |
| ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ | **4. Ընդհանրական իմացական կարողություններ** (ներառյալ դատողություններ անելը) | • Կարող է կիրառել քննադատական մտածողությունը, դրսևորել վերլուծելու և եզրահանգումներ անելու ունակություն, ինչպես նաև որոշակի ստեղծագործական մոտեցում՝ ոլորտի խնդիրները բացահայտելու և տարբեր լուծումներ առաջարկելու համար: | • Կարող է հետազոտել, մոտարկել ու սինթեզել մասնագիտական ոլորտին առնչվող նոր գաղափարներ, մոտեցումներ, տեսություններ և/կամ հետազոտական հիմնախնդիրներ և առաջարկել նորարարական ու ստեղծարար լուծումներ, որոնք ընդլայնում են ոլորտի գիտելիքն ու մասնագիտական գործունեությունը: |
| | **3. Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ** | • Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը բացատրել և ներկայացնել տվյալ ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ, խնդիրներ, փաստարկներ և լուծումներ:<br>• Կարող է կիրառել ՏՀՏ-ներ իր մասնագիտական ոլորտում աշխատանքը դյուրացնելու և արագացնելու ու խնդիրներ լուծելու համար:<br>• Կարող է հավաքագրել, մշակել և մեկնաբանել ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալները՝ հիմնավոր դատողություններ անելու համար: | • Կարող է օգտագործել մասնագիտական լեզվական արտահայտչամիջոցներ և խոսքային հնարքներ՝ իր եզրահանգումները և հետազոտության արդյունքները մասնագիտական հանրությանը համակարգված կերպով ներկայացնելու համար:<br>• Կարող է կիրառել ՏՀՏ-ներ մասնագիտական ոլորտում նոր, բարդ խնդիրներ լուծելու և հետազոտությանը օժանդակելու համար:<br>• Կարող է վերլուծել և գնահատել տվյալ ոլորտին առնչվող քանակական և որակական տվյալները՝ ոչ ամբողջական կամ սահմանափակ տեղեկատվության պայմաններում եզրահանգումներ անելու և որոշումներ կայացնելու համար: |
| | **2. Գիտելիքի և իմացության կիրառումը** | • Կարող է կիրառել ոլորտի հիմնարար սկզբունքները և մեթոդները՝ ծանոթ իրադրություններում մասնագիտությանը բնորոշ խնդիրների լուծման համար: | • Կարող է համակողմանիորեն կիրառել ոլորտի հայեցակարգային և մեթոդաբանական սկզբունքները՝ մասնագիտական բնագավառում (կամ միջմասնագիտական ոլորտներում) ոչ ամբողջական տեղեկատվության պայմաններում կամ նոր և անծանոթ իրավիճակներում տեսական և գործնական խնդիրների լուծման համար: |
| ԳԻՏԵԼԻՔ | **1. Գիտելիք և իմացություն** | • Դրսևորում է ոլորտի արդի հիմնարար հասկացությունների, տեսությունների ու մեթոդների վերաբերյալ ընդհանուր գիտելիք և իմացություն: | • Դրսևորում է մասնագիտացման տվյալ բնագավառի և տարբեր փոխառնչվող ոլորտների տեսությունների և մեթոդների վերաբերյալ համակողմանի գիտելիք և իմացություն, որոնց մի մասը այդ բնագավառի վերջին ձեռքբերումներն են և հիմք են հանդիսանում ինքնուրույն հետազոտական աշխատանքի համար: |
| **Որակավորման բնորոշումը** | | ➢ Բակալավրի աստիճան է շնորհվում անձանց, ովքեր ունեն համակողմանի և համակարգված գիտելիք և կարողություններ՝ մի շարք ոլորտներում մասնագիտական աշխատանք կատարելու և/կամ ուսումը շարունակելու համար | ➢ Մագիստրոսի աստիճան է շնորհվում անձանց, ովքեր ունեն ոլորտի առաջավոր և մասնագիտացված գիտելիք և կարողություններ՝ մասնագիտական գործունեություն և հետազոտություն իրականացնելու և/կամ ուսումը շարունակելու համար |
| **Ուսումնառության ծավալը ECTS կրեդիտներով** | | **180-240** | **60-120** |

Շնորհակալություն

kristina.tsaturyan@gmail.com

ARMENQA